ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Անճաւասիկ ել սերմանող ի սերմանել, և եղև ի սերմանելն... ոմն անկաւ յապառաժի..... և այլն անկաւ յերկիր բարւոք և ելեալ աճեցեալ տայր զպտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»:

(Մարկ. Աւետ. Դ. 4)

Հա երկրորդ տարին է, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը տալիս է իր բերքը՝ երկրորդ շրջանավարտները։ Համաձայն նախապես մշակված ծրագրի, որպեսզի ավարտող ուսանողները հնարավորություն ունենան իրենց դիպլոմային աշխատությունները (ավարտական շարադրությունները) պատրաստելու, սույն թվի մարտի կեսերին Հոգևոր Ճեմարանի Գ. լսարանի դասախոսությունները արդեն վերջացած լինելով սկսվեցին ավարտական լսարանի քննությունները։

Ավանդական սովորություն է դառել, Հոգևոր Ճեմարանի քննությունները, առավել ևս ավարտական քննությունները տեղի ունենան հանդիսավոր կերպով, Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, դասախոսների և այլ հյուրերի ներկայությամբ։

Համաձայն իր սովորության, Վեհափառ Հայրապետը այս տարի ևս բարեհաճեց ներկա լինել համարյա բոլոր առարկաների քննություններին. ներկա էր նաև գերապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոսը, Տյար Ստեփան Կամսարականը, վերատեսուչ Մ. Մինասյանը, Մայր Աթոռի միաբանության անդամներ, դասախոսներ և ուրիշները։

Պատրաստ և ինքնավստահ ուսանողները ներկայանում են քննության և, մոտենալով սեղանին, համարձակ ու համոզված և համոզիչ տոնով սկսում են պատասխանել իրենց վիճակված հարցատոմսերին և նույնքան համոզված և համոզիչ ու պատճառաբանված պատասխանում են նաև Վեհափառ Հայրապետի, դասախոսի կամ ուրիշների տված հարցերին, ընդհանրապես ճիշտ և անսխալ։

Քննությունները ցույց տվեցին, որ Հոգևոր Ճեմարանի ուսանողները հավասար կերպով յուրացրել են ինչպես կրոնական-աստվածաբանական առարկաները (կրոնների պատմություն, աստվածաբանություն, հայ և ընդհանուր եկեղեցիների պատմություն, Հիսուսի կյանքը և այլն), նույնպես և հայագիտական ու մյուս առարկաները։

Ինչպես անցյալ տարվա ավարտական քննությունները, նույնպես և ներկա տարվա ավարտական քննությունները մի անգամ ևս ապացուցեցին, որ Հոգևոր Ճեմարանի վարչությունն ու դասախոսական կազմը, որը բաղկացած է հմուտ և փորձված մասնագետներից, պրոֆեսոր-դոկտորներից, դեկաններից և գիտության թեկնածուներից, ջանք չեն խնայել արդարացնելու այն վստահությունը, որ ունի Ամենայն Հայոց

Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ—ն և այն հույսերը, որ տածում են Հոգևոր Ճեմարանի սաների բարերարներն ու հավատացյալ հայ համայնքը Մայր Հայրենիքում և Սփյուռքում։

Իրենց քրտնաջան աշխատությամբ և հաջող քննությունները հանձնելով՝ Հ. Ճեմարանի ուսանողներն արդարացրին Վեհափառ Հայրապետի հույսերը։ Մի հանգամանք, որի ակներև արտահայտությունը կայանում է քննություններից հետո ուսանողներին ուղղած հետևյալ գնահատական խոսքերից...

«...Հայ ժողովրդի պատմությունը Հ. Ճեմարանի ամենակարևոր դասընթացներից մեկն է։ Ես հավատացած եմ, որ մեր ժամանակի հայոց պատմությունը լոկ նկարագրական բնույթ չունի, այլ նրա բոլոր դեպքերը պատճառաբանված են. հայոց պատմությունը արժեքավոր է նրանով, որ բոլոր ազգերը մեզ ճանաչում են այն հերոսական պայքարի շնորհիվ, որ հայ ժողովուրդը մղել է դարերի ընթացքում, իր վեհ գաղափարների, իր հայրենիքի անկախության և ազատության համար։ Այդպիսի մի վառ օրինակ է Վարդանանց պատերազմը։ Այդ խոշոր դեպքն ունեցել է իր նախապատրաստական շրջանը հանձինս Մեսրոպ Մաշտոցի և Սահակ կաթողիկոսի։ Նրանց շնորհիվ է, որ այսօր մենք ապրում ենք և կյանք ունենք...

«Լսելով ձեր պատասխանները ես եկա այն եզրակացության, որ դուք կամեցել եք իմանալ, թե ինչ վիճակի մեջ է մեր մատենագրությունը։ Իմ անձնական կարծիքը այն է, որ մատենագրությունը այնքան կարևոր է, որքան աստվածաբանությունը, որովհետև Ճեմարանը պատրաստում է ոչ միայն աստվածաբաններ, այլև ապագա հայագետներ։ Մատենագրությունն, այն հիմնական աղբյուրն է, որից դուք պիտի ըմպեք գիտության ջուր։

«Լսելով կրոնական, հայագիտական առարկաներից բացի նաև փիլիսոփայության, պատմության, գրականության, լեզվաբանության և այլ առարկաների քննությունները, ես եկա այն եզրակացության, որ ձեր դասախոսները ճիգ ու ջանք չեն խնայել, որպեսզի դուք խորապես յուրացնեք ձեզ ավանդված առարկաները, որպեսզի դուք ի վիճակի լինեք հետագայում ինքնուրույն



Վեհափառ Հայրապետը բնության գրկում

Վեհափառ Հայրապետը ուսանողության հետ միասին:

ուսումնասիրությամբ զբաղվել։ Շատ գոհ եմ ձեզանից, բոլորդ էլ լավ եք յուրացրել դասավանդված առարկաները և շատ լավ պատասխանեցիք, օրհնում եմ ձեզ բոլորիդ. մնաք ի խաղաղություն։

Ն. Վեհափառության Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի վերոհիշյալ խոսքերից երևում է, որ հիրավի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցանած սերմը, նույնպես և Հ. Ճեմարանի դասախոսների սերմանած սերմերը չեն ընկել ապառաժի վրա կամ փշերի մեջ, այլ ընկել են բերրի ու արգավանդ հողի մեջ։ Եվ ահա, հայ եկեղեցին ու նրա արժանավոր հովվապետը քաղում են պտուղը, այսօր մեկի տեղ տասնյակներ, իսկ վաղը կքաղեն հարյուրներ։